

Անկախ ատղիտորական եզրակացություն

«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ բաժնետերերին և Խորհրդին

Մենք ատղիտի ենք ենթարկել «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմված են 2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, 2012թ.-ի, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունից և զրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունից, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագրից և այլ պարզաբանող ծանոթագրություններից:

Ֆինանսական հաշվետվությունների համար ատղիտի ենթարկված անձի պատասխանատվությունը

Ատղիտի ենթարկված անձի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որն աներաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից գերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ատղիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, մեր կողմից անցկացված ատղիտի հիման վրա, կարծիք հայտնել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ:

Մենք ատղիտն անցկացրել ենք Ատղիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են էթիկայի պահանջների հետևում, ինչպես նաև ատղիտի պլանավորում և անցկացում այնպես, որպեսզի ողջամիտ հավաստիացում ձեռք բերվի, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները գերծ են էական խեղաթյուրումներից:

Ատղիտը ներառում է ընթացակարգերի իրականացում՝ ուղղված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները և բացահայտումները հաստատող ատղիտորական ապացույցների ձեռքբերմանը: Ատղիտորական ընթացակարգերի ընտրությունը հանդիսանում է մեր զատողությունների առարկան, որը հիմնված է ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատման վրա՝ խաբեության կամ սխալի հետևանքով: Այս ռիսկի գնահատման գործընթացի ընթացքում ատղիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և արժանահավատությունը ապահովող ներքին վերահսկողության համակարգը, համապատասխան ատղիտորական ընթացակարգերի ընտրության նպատակով, բայց ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Ատղիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ատղիտի ենթարկված անձի ղեկավարության կողմից կատարված գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ատղիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված ատղիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները Հջմաբիտ և արժանահավատորեն են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ և Ի Կո Յանգ» ՓԲԸ

Առաջիկա բաժնի հիմնադիր գործընկեր



Մերգեյ Տասկան

Գլխավոր տնօրեն՝ Մ. Ալեքսանդրյանի ի ղեկավարությամբ սեն Է. Հայրապետյանի (գործող 01.09.11թ) տրված լիազորագրի նիման վրա:



Է. Հայրապետյան

4 ապրիլի, 2013թ.